ԼԻԼԻԹ ՄԱԿԱՐՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ), աջակցելով հայրենադարձներին, աշխատանքներ էր տանում նրանց տեղավորելու, բնակարանով, աշխատանքով ապահովելու ուղղությամբ՝ այդ նպատակով համագործակցելով արտասահմանի տարբեր հայկական կազմակերպությունների՝ մասնավորապես հայրենակցական միությունների հետ: Վերջինները հայրենիքից ու բնօրրանից (նույն գյուղից, քաղաքից, գավառից) արտագաղթած համերկրացի հայերին միավորող կազմակերպություններ էին:

Հայրենադարձների համար առաջին հերթին հարկավոր էր գլխավերևում տանիք ունենալ: Այդ նպատակով ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունն իր մասնաճյուղերի միջոցով սկսեց հանգանակություններ կատարել արտասահմանում: Խորհրդային Հայաստանում ՀՕԿ-ին վստահվեց հայրենակցական միությունների և այլ հասարակական կազմակերպությունների կողմից ուղարկված գումարների տնօրինումը և բնակավայրեր հիմնելու կազմակերպչական և շինարարական աշխատանքների ղեկավարումը: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը 1924 թ. հունվարին շրջաբերականով դիմեց արտասահմանի բոլոր բարեգործական և հայրենակցական միություններին, կազմակերպություններին, հասարակական լայն խավերին ու անհատ-

ներին՝ այս ձեռնարկները համատեղ կյանքի կոչելու խնդրանքով[1]:

Տասներկու հայրենակցական միություններ ներկայացուցչություններ ունեին Խորհրդային Հայաստանում: Դրանք էին՝ Նոր Եվդոկիան, Նոր Խարբերդը, Նոր Արաբկիրը, Նուբարաշենը, Նոր Սեբաստիան, Նոր Թոմարզան, Նոր Մալաթիան, Նոր Կամիսը, Նոր Պարտիզակը, Նոր Քոչիսարը, Դուզ Իսարը, Նոր Բութանիան (վերջին յոթը մտնում էին Սեբաստիայի հայրենակցական միության նյույորքյան կենտրոնի վարչության կազմի մեջ և համանուն ավանները համարվում էին Նոր Սեբաստիայի գյուղերը)[2]: Հայրենակցական միությունները նպատակ ունեին կազմակերպել Հայոց ցեղասպանության արդյունքում հայրենի բնակավայրերից բռնի տեղահանված ու գաղթական դարձած հայրենակիցների տեղափոխությունը Խորհրդային Հայաստան և ձեռնամուխ էին եղել վերջինի վերաշինության գործին: Այդ գործի առաջին նախաձեռնողներից էր Ամերիկահայ արաբկիրցիների միությունը, որը 1924 թ. հունվարին իր պատգամավորական ժողովում քննարկում է արաբկիրցի գաղթականներին Հայաստան տեղափոխելու հարցը, իսկ նույն թվականի ապրիլի 15-ին միության կենտրոնական վարչությունն արդեն նամակով դիմում է Հայաստանի կառավարությանը՝ հայրենիքում Նոր Արաբկիր անունով ավան կառուցելու համար հողատարածք հատկացնելու խնդրանքով[3]: Հայրենակցական միությունները ցանկանում էին նոր կառուցվող բնակավայրերը կոչել կորուսյալ հայրենիքի քաղաքների, գյուղերի անուններով, որպեսզի դրանք հավերժանային հայության հիշողության մեջ: Ամերիկահայ արաբկիրցիների միության ար-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 89, թ. 37:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 219, թ. 4:
[3] Տե՛ս «Շինարար», Նյու Յորք, 1931 թ., թիւ 4, էջ 84-85:

տակարգ պատգամավորական ժողովն ընտրում է երկու ներկայացուցիչ՝ Մկրտիչ Ղազիկյանին և Միսակ Վարդանյանին, որոնք անմիջապես մեկնում են Հայաստան՝ վայրի ընտրության և այլ հարակից հարցերով զբաղվելու նպատակով[4]:

Հայրենադարձների համար նոր բնակավայրեր կառուցելու համար հայրենակցական միությունների խնդրանքով ՀՍԽՀ ժողկոմխորհին է դիմում նաև ՀՕԿ-ը: 1925 թ. ապրիլի 3-ին ժողկոմխորհը հաստատեց «Նոր Արաբկիր» անունով ավան կառուցելու համար հողատարածք հատկացնելու մասին Երևանի քաղգավգործկոմի նախագահության որոշումը, իսկ ժողկոմխորհին կից գաղթականության հատուկ հանձնաժողովի 1925 թ. ապրիլի 1-ի նիստում որոշվեց Նոր Արաբկիր ավանը հիմնադրել ՀՕԿ-ի հսկողությամբ: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանն առաջարկվեց ցուցակագրել Հայաստանում գտնվող եվդոկացիներին: Երևանի քաղգավգործկոմի և Ամերիկահայ արաբկիրցիների միության միջև 1925 թ. մայիսի 3-ին կնքվում է պայմանագիր, որի համաձայն ավան կառուցելու համար Երևանի, Քանաքեռի, Հրազդան և Գետառ գետերի միջև գտնվող տարածությունից հատկացվում է 600 դեսյատին հողատարածք[5]:

Նոր Արաբկիրը կառուցվեց 1926–1934 թթ. ընթացքում: Այն սկզբում ուներ 1200 շնչից բաղկացած բնակչություն, այստեղ կազմակերպվել էր գործվածքի արտադրություն, կառուցվել մանկապարտեզ ու դպրոցի շենք[6]:

ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը թե՛ արտասահմանում և թե՛ խորհրդային հանրապետություններում գործող իր մասնաճյուղերին հրահանգում էր սերտ համագործակցել հայրե-

---

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 85:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 330, թ. 56, գ. 327, թ. 6, գ. 223, թ. 74:
[6] Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 798, թ. 2:

նակցական միությունների հետ: Այդ նպատակով ՀՕԿ-ի Խարկովի մասնաճյուղը որոշում է հանգանակություն կազմակերպել և այս գործընթացին ավելի լուրջ բնույթ հաղորդելու համար կոմիտեի կազմի մեջ են հրավիրվում տեղի հայրենակցական միությունների ներկայացուցիչների, քանի որ հայությունը սովորաբար խմբված էր որևէ հայրենակցականի մեջ[7]:

Ամերիկահայ արաբկիրցիների միության օրինակով՝ 1928 թ. մայիսի 26-ին Սեբաստիայի վերաշինական միության 10-րդ պատգամավորական ժողովը որոշում է կայացնում Խորհրդային Հայաստանում հիմնել Նոր Սեբաստիա անունով ավան և 1929 թ. ապրիլի 20-ին այդ նպատակի համար ուղարկում է 5.000 դոլար: Նոր Սեբաստիան հիմնվում է Երևանից 8 վերստ հեռավորության վրա՝ Նոր Մալաթիայի կողքին: Այն արդեն ուներ մետաքսի գործվածքային և ոլորվածքային արտադրություն, կառուցվել էր 16 տուն՝ 420 բնակչությամբ, նաև մանկապարտեզ ու դպրոցի շենք[8]:

Էվջիլարի ջրանցքով ոռոգվող նախկին ամայի տափաստանում 1925 թ. գարնանը ՀՕԿ-ի կենտրոնական վարչության անմիջական վերահսկողությամբ հիմնվել էր նաև Նոր Եվդոկիա ավանը[9]: Սակայն շուտով պարզ է դառնում, որ ավանին հատկացված վայրը թե՛ կլիմայի և թե՛ հողի որակի տեսակետից անբարենպաստ է, որի համարել էլ Նոր Եվդոկիան 1929թ. տեղափոխվում է էջմիածնից 4 կմ հեռավորության վրա գտնվող մեկ այլ վայր, ինչն էլ իր հերթին լրացուցիչ ծախսեր էր պահանջում[10]:

---

[7] Տե՛ս նույն տեղում, գ. 306, թ. 18 շրջ.:

[8] Տե՛ս «Շինարար», Նյու Յորք, 1931 թ., թիւ 4, էջ 30-31, ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 832, թ. 11, գ. 798, թ. 7:

[9] Տե՛ս «ՀՕԿ-ի տեղեկատու», № 1, էջ 51:

[10] Տե՛ս Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005, էջ 181:

1929 թ. մարտի 3-ին Ռեյսինում գումարվում է համաթոմարզացիների հրապարակային ժողով, որի ժամանակ միության կենտրոնական վարչությանը կից ստեղծվում է Վերաշինաց հանձնախումբ: Վերջինին իրավունք է տրվում դիմել Հայաստանի կառավարությանը՝ թոմարզացիներին Հայաստան տեղափոխելու համար: Վերաշինաց հանձնախումբը ՀՕԿ-ի կենտրոնական վարչության միջոցով դիմում է կառավարությանը՝ խնդրելով արտոնել 150 թոմարզացիների մուտքը Խորհրդային Հայաստան: 1929 թ. փետրվարի 17-ին ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը հեռագրով տեղեկացնում է կառավարության թույլտվության մասին և խնդրում ուղարկել 10.000 դոլար: Արդեն 1929 թ. հունիսի 20-ին փորվում են Նոր Թոմարզայի առաջին 3 բնակարանի հիմքերը[11]:

Նոր Խարբերդի կառուցման նախաձեռնողը Խարբերդի կրթասիրաց և նպաստամատույց միացյալ ընկերությունն էր: Գյուղը հիմնվեց 1930–1934 թթ.: Սկզբնական շրջանում կառուցվել էր 8 տուն, գյուղն ուներ 40 տնտեսություն՝ 250 շունչ բնակչությամբ[12]:

ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը 1935 թ. փետրվարին նամակ է ստանում նաև Կյուրինի հայրենակցական միության կենտրոնական վարչությունից, որով հայտնվում էր, որ Խորհրդային Հայաստանում Կյուրին անունով թաղամաս հիմնելու համար հանգանակել է 15.000 դոլար և ՀՕԿ-ին խնդրում են որոշել թաղամասի վայրը: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունն այդ ուղղությամբ լուրջ ուսումնասիրություններ է կատարում և, քանի որ Արևմտյան Հայաստանում Կյուրինը գտնվում էր Սեբաստիայի նահանգում, ապա նպատակահարմար է հա-

---

[11] Տե՛ս «Շինարար», Նյու Յորք, 1931 թ., թիւ 4, էջ 110–111:
[12] Տե՛ս նույն տեղում, էջ 89, ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 798, թ. 6:

մարվում այն հիմնել Նոր Սեբաստիայում, որն արդեն արդյունաբերական ավան էր դարձել[13]:

ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը մեծ աշխատանք էր տանում հայրենակցական միություններին Խորհրդային Հայաստանի հետ կապելու ուղղությամբ և կազմակերպում էր նրանց մասնակցությունը երկրի վերաշինության գործին: ՀՕԿ-ն իր մասնաճյուղերին հրահանգում էր ավելի սերտ համագործակցել արտասահմանի հայրենակցական միությունների հետ: Միայն ԱՄՆ-ում գոյություն ուներ շուրջ 130 հայրենակցական միություն[14]:

Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության անդամ Արշակ Չոպանյանը 1932 թ. լինում է Հայաստանում՝ որպես կաթողիկոսական ընտրությունների Լիոնի պատվիրակ: Վերադարձից հետո դեկտեմբերի 28-ի կուսակցության ժողովում նա զեկուցում է իր այցելության մասին: Ա. Չոպանյանը Ա. Խանջյանի հետ հանդիպման ժամանակ քննարկել էր նաև ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի հարցը և, թեև իր մտահոգությունն էր հայտնել որոշ կոմունիստների ոչ պատշաճ պահվածքի առթիվ, այնուամենայնիվ նշել է. «...Երեւանեն մէջ համոզուեցայ, որ ՀՕԿ-ը մէծ դէր կը կատարէ արտասահմանեան Հայրենակցականներու կողմէ ձեռնարկուած ավաններու շինութեան և գաղթականներու տեղաւորման գործին մէջ. յանգած եմ այն եզրակացութեան, թէ պէտք է շարունակենք մեր կողմէ բարոյական այն աջակցութիւնը, զոր ցոյց տուած ենք ներգաղթի եւ շինարարութեան գործին մէջ»[15]:

1934 թ. հուլիսի 30-ին ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը հրավիրում է հայրենակցական միությունների ներկայացուցիչների

---

[13] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 1, գ. 1093, թ. 4–5:

[14] Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 192, թ. 15:

[15] Տե՛ս Դալլաքյան Կ., ՀԲԸՄ նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ, Երևան, 1996, էջ 38–40:

ժողով, որի արդյունքում ստեղծվում է վարչական մարմին՝ Գր. Վարդանյանի նախագահությամբ: Այս ժողովը քննարկում է նոր ավանների շինարարական աշխատանքների ընթացքը և որոշում է ՀՕԿ-ի միջնորդությամբ դիմել ՀՍԽՀ կառավարությանը հայրենադարձության գործընթացը շարունակելու համար[16]:

Երևանի Նոր Մալաթիա, Նոր Արաբկիր, Նուբարաշեն, Յոնջալաղ և Նոր Բութանիա թաղամասերում, ուր տեղավորվել էր հայրենադարձված հայ ազգաբնակչությունը, բացվել էին բժշկական կայաններ, մալարիայով վարակված վայրերում կազմակերպվում էին տրոպիկական կայաններ՝ բուժօգնություն ցույց տալու համար[17]:

1935 թ. հունվարի 13-ին կայացած ՀՕԿ-ի նորընտիր գլխավոր վարչության նիստում որոշվում է սերտացնել կապը հայրենակցական միությունների հետ: Շեշտվում էր, որ սփյուռքի կազմակերպությունները պարտավոր են իրենց նյութական և բարոյական բոլոր գործառույթները կատարել արտասահմանյան ՀՕԿ-երի կենտրոնական վարչությունների միջոցով: Նույն թվականի փետրվարի 7-ին Երևանում հրավիրված հայրենակցական միությունների ներկայացուցիչների ժողովին մասնակցում էին նաև ՀՕԿ-ի գլխավոր վարչության նախագահ Գ. Վարդանյանը և նոր ավանների ներկայացուցիչները: Գ. Վարդանյանը հանդես եկավ զեկուցումով՝ նշելով նոր ավանների կառուցման գործում ՀՍԽՀ կառավարության հոգատար վերաբերմունքի մասին, որի ապացույցը ժողկոմխորհին կից Ներգաղթի հանձնաժողով կազմելն էր և հայրենադարձության գործընթացին նպաստելը: ՀՕԿ-ի գլխավոր վարչությունն իր հերթին կազմակերպել էր շինարարական բաժին, որը ղեկավարե-

---

[16] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 232, թ. 16–19:
[17] Տե՛ս նույն տեղում, գ. 72, թ. 43:

լու էր ավանների շինարարական և տնտեսական բոլոր տեսակի աշխատանքները[18]:

1933 թ. փետրվարին Գ. Վարդանյանն այցելում է Լիոնի շրջան: Լիոնի, Տեսսինի, Վիենի և Սենթ Շամոնի մասնաճյուղերը նրա պատվին ընդունելություն և հրապարակային ժողովներ են կազմակերպում: Հայրենակցական միությունները նույնպես ջերմ ընդունելություն են կազմակերպում Գր. Վարդանյանին և հրավիրում զեկուցելու Հայաստանում կառուցվող ավանների մասին: ՀՕԿ-ի Լիոնի «Ձորագես» մասնաճյուղը Հայաստանի բնակարանային շինարարությանն աջակցելու համար իր շուրջն էր հավաքել հայրենակցական միություններին[19]:

ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի Դ (1933 թ. ապրիլի 29–30), Ե (1935 թ. մայիսի 30 – հունիսի 3), Զ (1937 թ. հունիսի 25–27) պատգամավորական ժողովներում կրկին կարևորվում է հայրենակցական միությունների հետ կապերի սերտացումը, վերջինների հետ փոխհարաբերությունների հարցում հրահանգվում է պահպանել բարիդրացիական համագործակցությունը և ջանքերն ավելացնել Խորհրդային Հայաստանում բնակարանային շինարարության ընթացքը նոր թափով շարունակելու ուղղությամբ[20]:

1923–1937 թթ. ընթացքում ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը գումարներ է ստացել Նոր Եվդոկիա (47361 ռ., 23 կ.), Նոր Սեբաստիա (27793 ռ., 50 կ.), Նոր Մալաթիա (19818 ռ., 75 կ.), Նոր Խարբերդ (57637 ռ., 45 կ.), Նոր Թոմարզա (38880 ռ.), Նոր Տիգրանակերտ (21760 ռ.), Նոր Կեսարիա (8564 ռ., 74 կ.), Նոր Քղի (37765 ռ., 63 կ.), Նոր Յոզղաթ (9110 ռ.), Նոր Կեմե-

---

[18] Տե՛ս նույն տեղում, գ. 236, թ. 10–11:

[19] Տե՛ս «ՀՕԿ» (Օրգան արտասահմանեան Հայերու), Փարիզ, Ա տարի, թիւ 2, 1933 թ. մարտ, էջ 53:

[20] Տե՛ս նույն տեղում, թիւ 3, 1933 թ. ապրիլ, էջ 51–63, ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 566, թ. 12, գ. 682, թ. 1, 5–7:

րեկ (1395 ռ., 53 կ.), Նոր Բյութանիա, Նոր Կյուրին, Նոր Կամիս, Նոր Թոքատ և այլ հայրենակցական միություններից ու տարբեր անհատներից[21]:

Հայրենակցական միությունները 1930-ական թթ. ՀՕԿ-ի արտասահմանյան կենտրոնական վարչությունների միջոցով Հայաստան են ուղարկել 27 մարդատար և բեռնատար ավտոմեքենա, 79 գրամեքենա և այլ ապրանքներ, որոնք ժողկոմխորհի կարգադրության համաձայն հանձնվել են տարբեր պետական հիմնարկների[22]:

1920-ական թթ. վերջերին և 1930-ական թթ. սկզբներին հիմնադրվում են նաև Նոր Մալաթիա,Նոր Կեսարիա, Նոր Տիգրանակերտ, Նուբարաշեն, Նոր Քղի և այլ ավաններ[23]:

Սակայն 1930-ական թթ. բռնաճնշումների շրջանում խորհրդային ղեկավարությունը փոխեց իր վերաբերմունքը սփյուռքի հայկական համայնքների և կազմակերպությունների նկատմամբ: Սփյուռքի հետ կապի սառեցման պայմաններում ՀՍԽՀ իշխանությունների համար նրանց գոյությունն այլևս չէր կարևորվում: ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյի 1937 թ. նոյեմբերի 13-ի նիստում նշվում է, որ ՀՕԿ-ի անունից հայրենադարձվածների համար կառուցվում էին ավաններ, դպրոցներ, ջրմուղ և այլ կառույցներ, որոնք կոչվում էին հակահեղափոխական, դաշնակցական առաջնորդների և հայ կապիտալիստների անուններով (Նուբար փաշա, Մելքոնյան, Կարապետ Սարյան և ուրիշներ), որ ՀՕԿ-ի ու հայրենակցականների ներկայացուցիչների պատրվակով Հայաստան էին ուղարկվում արտասահմանյան էմիսարներ և գործակալներ՝ հակահեղափոխական, քայքայիչ աշխատանք կատարելու նպատակով: Դրանից

---

[21] Տե՛ս նույն տեղում, գ. 686, թ. 8–9:
[22] Տե՛ս նույն տեղում, գ. 230, թ. 52:
[23] Տե՛ս նույն տեղում, գ. 777, թ. 1, գ. 798, թ. 6, 8, 9, 11:

ելնելով՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոն ՀԽՍՀ ժողկոմխորհին առաջարկեց լուծարել ՀՕԿ-ը և Երևանում գտնվող արտասահմանյան հայրենակցականների բոլոր ներկայացուցչությունները; ինչպես նաև «Բարեգործական» և «Մելքոնյան ֆոնդ» միությունները: Կենտգործկոմին հանձնարարվեց վերանվանել այն ավանները, դպրոցները, հիվանդանոցները և այլ հաստատությունները, «որոնք կրում են հակահեղափոխական կուսակցությունների առաջնորդների և հայ կապիտալիստների անունները»[24]:

ՀՕԿ-ը մեծ ներդրում ունեցավ հայրենակցական միությունների հետ կապեր հաստատելու, համագործակցելու, վերջինների կողմից հանգանակված գումարները Խորհրդային Հայաստան փոխադրելու, նրանց կողմից կառուցվող նոր բնակավայրերի շինարարական աշխատանքները կազմակերպելու և տնօրինելու ուղղությամբ:

ЛИЛИТ МАКАРЯН
кандидат исторических наук

К ВОПРОСУ О СОТРУДНИЧЕСТВЕ КОМИТЕТА ПОМОЩИ АРМЕНИИ И ЗЕМЛЯЧЕСКИХ СОЮЗОВ

РЕЗЮМЕ

Спасшиеся от геноцида 1915–1922 гг. в Османской империи и нашедшие пристанище за границей армяне желали востановления своих очагов на территории Советской Армении под их прежними названиями. Для реализации этой программы земля-

[24] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 17, գ. 53, թ. 84, 89–90:

ческие союзы организовывали сбор пожертвований, а собранные средства направляли в Советскую Армению. Управление и организация на месте этих работ была доверена Комитету помощи Армении. Благодаря сотрудничеству комитета и земляческих союзов в Советской Армении были построены десятки новых поселений – Нор Арабкир, Нор Себастия, Нор Кесария, Нор Харберд, Нор Малатия и др.

LILIT MAKARYAN
PhD in History

ON THE PROBLEM OF COOPERATION OF ARMENIAN RELIEF COMMITTEE WITH UNIONS OF COMPATRIOTS

SUMMARY

Armenians who survived the Genocide in the Ottoman Empire in 1915-1922 and sheltered abroad wanted to construct their homes with their old names in Soviet Armenia. For realizing of these programs unions of compatriots organized donations and collected funds for sending to Soviet Armenia. Organization and management was trusted to Armenian Relief Committee of, which did everything for that. Thanks to cooperation of Armenian Relief Committee and the Patriotic Union of Soviet Armenia has constructed dozens of new settlements: Nor Arabkir, Nor Sebastia, Nor Cesaria, Nor Kharberd, Nor Malatia and etc.